Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

ՏԱՐԱԾՔԸ (ՀՀ տարածքի 4.2%-ը) ..... 1242 քառ.կմ

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

-ըստ ԱՎԾ տվյալների

2015թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ..... 265.6հազ. մարդ

որից քաղաքային .....84.0հազ. մարդ

գյուղական ..... 181.6հազ. մարդ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 214 մարդ/ քառ.կմ

ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 8.8%

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԹԻՎԸ 97

որից քաղաքային 3

գյուղական 94

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ 98

որից սահմանամերձ..... 8

ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի հետ.....130.5 կմ

Տարածաշրջանները ..... Արմավիր, Էջմիածին, Բաղրամյան

Քաղաքները ..... Վաղարշապատ, Արմավիր, Մեծամոր

ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ ..... **ք.Արմավիր**

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Մարզում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացվել է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական գործադիր մարմինների և նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա: Սահմանված կարգով կազմակերպվել է մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, համակարգվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների աշխատանքը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ և 10 խորհրդակցություն: Մարզխորհրդի նիստերում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակին առնչվող հարցեր:

Օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետարանի կողմից ուսումնասիրվել են մարզի համայնքներից ստացված ավագանիների նիստերում ընդունված բոլոր որոշումները, որոնց վերլուծության արդյունքում արձանագրված առարկությունները վերաբերել են միայն օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառմանը: Գործնական աշխատանքներ են տարվել նաև մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից ընդունված իրավական ակտերն ուսումնասիրելու և գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի տարեկան աշխատանքային պլանը, մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունները:

2015թ. մարզպետարանի հաստիքային միավորների թիվը կազմում է 129, որից 109-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոններ են: Հայտարարված մրցույթներից քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում հայտարարվել է 3 մրցույթ, որի արդյունքում պաշտոնի է նշանակվել 3 մասնագետ, իսկ մարզպետարանի աշխատակազմում հայտարարվել է 4 մրցույթ, որից 2-ին դիմող չի եղել, 1 մրցույթին մասնակիցը չի ներկայացել, մյուս մրցույթում հաղթող չի գրանցվել: Կնքվել է 10 ժամկետային աշխատանքային պայմանագիր, անորոշ ժամկետով՝ 5, լուծվել է՝ 3 անորոշ ժամկետով կնքված, 7 ժամկետային, 2 սեզոնային աշխատանքային պայմանագիր: 30.12.2015թ. դրությամբ աշխատակազմում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնների թիվը 8-ն է, որից 7-ը համալրված է աշխատանքային պայմանագրերով, 1-ը թափուր է: 3 քաղաքացիական ծառայողի շնորհվել է քաղաքացիական ծառայության համապատասխան և 6 քաղաքացիական ծառայողի ավելի բարձր դասային աստիճան: Մարզպետարանի աշխատակազմում ատեստավորվել են 11 առաջատար և 10 կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներ: Ըստ հաստատված պլան-գրաֆիկի վերապատրաստվել են 39 քաղաքացիական ծառայողներ: Այլ ծրագրերով ՀՀ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում և «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ում վերապատրաստվել են համապատասխանաբար 10 և 8 աշխատակիցներ:

Ներքին աուդիտի 2015թ. տարեկան և ռազմավարական ծրագրին համապատասխան 35 պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է համապատասխանության, ֆինանսական աուդիտ, 7 բուժհաստատություններում՝ «ՀՀ Արմավիրի մարզի Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» ՓԲԸ, «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՊՓԲԸ, «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ, «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ, «Վաղարշապատի ծննդատուն» ՊՓԲԸ ֆինանսական աուդիտ, Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի 6 բաժիններում և 1 վարչությունում՝ համապատասխանության աուդիտ, որոնց արդյունքների մասին կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ: Հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի վարչությանը: Հրավիրվել է ներքին աուդիտի կոմիտեի 4 նիստ, որոնց ընթացքում կատարվել է աուդիտորական հաշվետվությունների քննարկում և կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի կողմից ընդունվել և արձակվել են համապատասխանաբար 214 որոշումներ և 111 կարգադրություններ: Մուտքագրվել է ընդհանուր քանակով 14513 և առաքվել 5116 փաստաթուղթ:

Մարզպետի մոտ յուրաքանչյուր ամսվա հինգշաբթի օրերին կազմակերպված ընդունելություններին ընդհանուր թվով մասնակցել են 240 քաղաքացիներ, որոնցից 47-ը իրենց հարցադրումներին ստացել են բանավոր սպառիչ պատասխաններ, ինչպես նաև լուծվել են նրանց կողմից բարձրացված բազում հարցեր: Մարզպետարան են ստացվել քաղաքացիների ընդհանուր թվով 2178 դիմումներ, 9 առաջարկություններ և 52 բողոքներ: Մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության և դիմումների մասին տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման ու համայնքային ծառայության հարցեր

Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով, ինչպես նաև վերահսկել է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը, մշտական հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, համայնքի ղեկավարի կարգադրությունների սահմանված կարգով մարզպետարան ներկայացնելու նկատմամբ:

Վարչական և ֆինանսական հսկողություն իրականացվել մարզի 33 համայնքներում՝ 31 գյուղական և 2 քաղաքային (Առատաշեն, Գրիբոյեդով, Մուսալեռ, Վարդանաշեն, Արգինա, Գետաշեն, Բաղրամյան (Բաղր.) ք.Մեծամոր, Նոր Արմավիր, Այգեկ, Ջրարբի, Ծաղկունք, Նոր Արտագերս, Բաղրամյան (Էջմ.), Դողս, Երասխահուն, Ծաղկալանջ, Շահումյան, Ջրառատ, Կողբավան, Մրգաստան, Դաշտ, Հացիկ, Բագարան, Ալաշկերտ, Նորավան, ք.Արմավիր, Մյասնիկյան, Բամբակաշատ, Մարգարա, Տանձուտ, Հայկավան, Արտամետ):

Մարզի թվով 15 համայնքներում (ք.Արմավիր, Նալբանդյան, Նոր Արմավիր, Հովտամեջ, Հայկավան և Փարաքար, Նոր Կեսարիա, Տանձուտ, Շահումյան, Արագած, Արշալույս, Ֆերիկ, Նորապատ, Ալաշկերտ, Դալարիկ) նշանակվել և անցկացվել են համայնքների ղեկավարների ընտրություններ, Ջրաշեն համայնքում՝ ավագանու անդամների ընտրություն: Նոր Արմավիր և Հայկավան համայնքներում իրականացվել են ընդունման և հանձնման աշխատանքներ: Ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման միջոցառումների, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով մշտապես համագործակցություն է իրականացվել համայնքների ղեկավարների, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների, ՀՀ անձնագրային և վիզաների վարչության Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի բաժանմունքների հետ:

Մասնակցություն է ցուցաբերվել 2015թ. դեկտեմբերի 6-ին կայացած ՀՀ Սահմանադրության փոփոխության հանրաքվեի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:

Համայնքային ծառայության բնագավառում՝

- յուրաքանչյուր ամսվա ավարտին պետական լիազորված մարմին է ներկայացվել մարզում համայնքների ղեկավարների որոշումներով նշանակված համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվելիք մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների ժամանակացույցերը, ինչպես նաև հրապարակված մրցույթների հայտարարությունների տեքստերը,
- նախորդ ամսվա ընթացքում անցկացված ատեստավորումների և մրցույթների արդյունքները,
- պարբերաբար՝ ամիսը երկու անգամ, մարզի համայնքներից հավաքագրվել և պետական լիազորված մարմին է ներկայացվել համայնքային ծառայության պաշտոնների գրանցամատյանի տվյալները:

Մշտապես մեթոդական օգնություն և պահանջվող խորհրդատվություն է տրվել գյուղապետարանների աշխատակազմերի քարտուղարներին, միաժամանակ հսկողություն է իրականացվել նշանակված մրցույթների և ատեստավորումների անցկացման նախապատրաստական աշխատանքները սահմանված կարգով կազմակերպելու նկատմամբ: Մասնակցություն է ցուցաբերվել համայնքային ծառայության մրցույթների և ատեստավորումների աշխատանքներին: Մարզի թվով 41 համայնքներում կազմակերպվել և անցկացվել են 49 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ, իսկ 47 համայնքում՝ համայնքային ծառայողների ատեստավորումներ:

2015թ. ընթացքում «Հայաստանի Համայնքների Ասոցիացիայի» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպել և անցկացվել են մարզի 89 համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներ: 2015թ. իրականացվել են ընդհանուր թվով 75 համայնքների ղեկավարների և ավագանու անդամների վերապատրաստումներ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր

Տարվա ընթացքում ապահովվել է համագործակցությունը հանրապետական գործադիր մարմինների բոլոր տարածքային ծառայությունների հետ, այդ թվում՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության, տարածքային զինկոմիսարիատների, սահմանապահ 2037 ռուսական և մարզի տարածքում տեղակայված հայկական զինվորական մասերի հետ:

Մարզային փրկարարական վարչության հետ մշակել և մարզպետի հաստատմանն է ներկայացվել՝ «ՀՀ Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015թ. հիմնական միջոցառումների պլանը», «Արմավիրի մարզի համայնքներում 2015թ. անցկացվելիք շտաբային և հրամանատարաշտաբային ուսումնավարժանքների պլան ժամանակացույցը», «ՀՀ Արմավիրի մարզի ՓՊ ծառայությունների շտաբի պետերի հետ 2015թ. հրամանատարական պատրաստության պարապմունքների թեմատիկ պլանը»:

«ՀՀ Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության 2015թ. հիմնական միջոցառումների պլանի» համաձայն՝ ՄՓՎ-ի հետ համատեղ 2015թ. ընթացքում մարզում կազմակերպել և անցկացրել են մի շարք միջոցառումներ՝

- մեկ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով
- տասնչորս համայնքային շտաբային ուսումնավարժություններ
- մարզի երեք միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են երեք օբյեկտային վարժանքներ, մի շարք դպրոցներում՝ թեմատիկ պարապմունքներ և դասախոսություններ:

Նախապատրաստել և համայնքներին է ուղարկվել ՀՀ ՏԿԱԻ նախարարի կողմից հաստատված «Բնակչության տարահանման միջոցառումների պլանի» նոր կառուցվածքի օրինակելի ձևերը:

Նախապատրաստվել և մարզպետի հաստատմանն է ներկայացրել «2015 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» որոշման նախագիծը, ինչպես նաև աշխատանքներ են տարվել նախազորակոչիկների, զինապարտների կցագրման գործընթացը լավագույնս կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:

Աջակցություն է ցուցաբերվել ձմեռային զորակոչի առաջին օրվա միջոցառման ապահովմանը, վերջին 7-8 տարիներին նորակոչիկները բանակ են ճանապարհվում Սարդարապատի հուշահամալիրում զոհված ազատամարտիկներին հարգանքի տուրք մատուցելով, երգ-երաժշտության ուղեկցությամբ և մարզպետի կողմից նվերներ ստանալով: Ուշադրության կենտրոնում է մարզի մի շարք կազմակերպություններում այլընտրանքային ծառայություն

կատարող անձանց աշխատանքային և կենցաղային պայմանների ապահովման և օրենքով սահմանված կարգով իրենց պարտականությունների կատարման գործընթացը:

Արմավիրի տարածքային զինվորական կոմիսարիատի հետ իրականացվել են Արմավիրի մարզպետարանի և մարզպետարանին ենթակա կազմակերպությունների աշխատակիցների ամրագրման ենթակա զինապարտների ցուցակների ճշգրտման և ամրագրման աշխատանքները:

2015թ. ընթացքում մարզ են այցելել ՀՀ Նախագահը, ՀՀ վարչապետը, նախարարները և մի շարք գործադիրի ներկայացուցիչներ, ինչպես նաև 2015թ. նոյեմբերին մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությունը ՀՀ Արմավիրի մարզպետը ներկայացրել է ՀՀ Նախագահին:

Ֆինանսական բնագավառ

ՀՀ Արմավիրի մարզպետն աշխատանքներ է տարել ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառներին և ծրագրերին նախատեսված միջոցների հատկացման ուղղությամբ, սահմանված կարգով վերահսկել դրանց նպատակային օգտագործումը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացված ծախսերը /30.12.2015թ. դրությամբ/ ունի հետևյալ պատկերը.

	2015թ. նախատեսված (հազ. դրամ)	2015թ. Ֆինանսավորում (հազ. դրամ)	2015թ. փաստացի ծախս (հազ. դրամ)
ՀՀ Արմավիրի մարզպետարանի պահպանում	503173,6	499294,4	499294,4
Կառավարման մարմինների կարողությունների զարգացում	3000,0	2710,9	2710,9
Արտասահմանյան գործուղումներ	259,3	259,3	259,3
Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին	272939,3	272939,3	272939,3
Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում	0,0	0,0	0,0
Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	37400,0	37400,0	37400,0
Մշակութային միջոցառումների իրականացում	2563,6	2563,6	2563,6
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	130000,0	128515,0	128515,0
Նախադպրոցական (կրթություն)	99607,8	106787,0	106787,0
Հանրակրթական ուսուցում	6268635,5	6206389,6	6206389,6
Հատուկ կրթություն	236159,4	217262,5	217262,5
Ներառական կրթություն	81667,5	142735,5	142735,5
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգա-յին նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	43478,0	43478,0	43478,0
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	177000,0	167986,7	167986,7

Կրթական հիմնարկների շինարարություն	0,0	0,0	0,0
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	10210,0	10210,0	10210,0
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթի ապահովում	324000,0	279107,3	279107,3
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	773588,8	764474,2	764474,2
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական ապահովում	4680,0	4680,0	4680,0
Ընդամենը	**8968362,8**	**8886793,3**	**8886793,3**
Դոտացիա	4092096,4	4092096,4	4092096,4
Ընդամենը	**13 060 459,2**	**12 978 889,7**	**12 978 889,7**

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 2015թ. մարզի 97 համայնքներին նախատեսված 4092.1 մլն. դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեները եկամտային մասով կատարվել են 98.8%, իսկ սեփական եկամուտները ապառքներով՝ 96.2%, աճը 2014 թվականի համեմատ նվազել է: Սեփական եկամուտները նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 43.1 մլն. դրամով:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 2055.7 մլն.դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմում է 31.6%, գույքահարկինը՝ 43.6%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 6.8%:

2015թ. սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել մարզի 97 համայնքների բյուջեների ամփոփը: ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել 114 պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները և հաշվարկային ցուցանիշները: Կազմվել և համապատասխան մարմիններին են ներկայացվել 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով տարվա ընթացքում պետական և համայնքային բյուջեների, տեղական և միջազգային կառույցների, հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների և մասնավոր ներդրողների միջոցներով իրականացվել են շուրջ 9 մլրդ. դրամի ծրագրեր:

Արդյունաբերության, ՓՄՁ, առևտրի և ծառայությունների բնագավառ

Արմավիրի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

Արմավիրի մարզում գրանցված են ավելի քան 45 արտադրական և 357 առևտրային ձեռնարկություններ: Գործող խոշոր կազմակերպություններից են՝ «ՄԱՊ» ՓԲԸ, «Տիեռաս դե Արմենիա» (Հայաստանի հողեր) ՓԲԸ, Վանանդի «Նոյան պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարան, «Արաքս թռչնաֆաբրիկա» ընկերություն, Բաղրամյանի թռչնաբուծական ֆաբրիկա, Եղեգնուտի «Սենտուրիոն» թռչնաբուծական ֆաբրիկա, «Բիգա», «Ամստեր Ֆլաուերս» հայ-հոլանդական ընկերություններ, «Արմավիրի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ, «Ռաստր գործարան», «Իմպերիալ-Տուր» ՍՊԸ, ՀԱԷԿ և այլն:

Արմավիրի մարզում գրանցված են ավելի քան 45 արտադրական և 357 առևտրային ձեռնարկություններ:

2015թ. մարզի առևտրաարդյունաբերական վիճակագրական ցուցանիշներն են. 2015թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում թողարկվել է 42,249.9 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 4.5%-ը: 2015թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 95.0%: 2015թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում արդյունաբե-րական արտադրանքի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 95.0%:

2015թ. մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է շուրջ 8,019 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 4,487 մարդ, իսկ առևտրի և սպասարկման ոլորտում՝ շուրջ 3,532 մարդ:

2015թ. մարզում մանրածախ առևտրի օբյեկտների քանակը 415-ն է, առևտրի շրջանառությունը կազմել է հունվար-սեպտեմբեր ամիսներին 36,472.4 մլն դրամ, ծառայությունների ծավալը կազմել է 13,698.7 մլն.դրամ:

Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ մարզի 97 համայնքներում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտներում 2015թ. իրականացվել են 656 ստուգումներ:

2015 թվականի ընթացքում Արմավիրի մարզում ՓՄՁ ոլորտում իրականացվել են՝

-«Նոր սերնդի ՀԴՄ-ների ձեռք բերման արժեքի փոխհատուցման» ծրագիր՝ 23

- Իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ 465

- Անցկացվել է մեկ սեմինար հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ, մասնակցել են 58 ՓՄՁ սուբյեկտներ:

- «Սկսնակ գործարարների աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացվել է մեկ դասընթաց՝ ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում՝ Գործարարության աջակցության գրասենյակի (BSC) հետ համատեղ: Դասընթացին մասնակցած 21 սկսնակ գործարարները ստացել են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման

գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ, որի արդյունքում մշակել են անհատական գործարար ծրագրեր: Արդյունքում, 6 սկսնակ գործարարներ ստացել են ֆինանսական աջակցություն:

- Տեղական տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում լիզինգով տրամադրվել է Բելառուս ՄՏԶ 82.1 տրակտոր՝ 1 հատ:

- 18.06.2015թ. Արմավիրի մարզպետարանում մարզի գործարարների համար կազմակերպվել են «Շրջանառության հարկի մասին ՀՀ օրենքի փոփոխությունների» վերաբերյալ սեմինար-խորհրդատվություններ:

- Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ-ի, Հայաստանի Զարգացման Հիմնադրամի և Հայաստանի Արտահանման ապահովագրության գործակալության հետ համատեղ 2015թ. սեպտեմբերին կազմակերպել է հանդիպում Արմավիրի մարզի թվով 89 գործարարների հետ:

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով ՀՀ Արմավիրի մարզպետարանի ծրագրերով մարզին հատկացվել է 307.0 մլն. դրամ, որից՝

- 130.0մլն. դրամով իրականացվել է Բամբակաշատ և Շենիկ համայնքների մշակույթի տների հիմնանորոգումը,

- 177.0 մլն. դրամով իրականացվել է Նորակերտ և Արագած համայնքերի մանկապարտեզների հիմնանորոգումը և Հայթաղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի վերանորոգումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզին հատկացվել է 605.0 մլն. դրամ, որից՝

1. 50.746 մլն. դրամով իրականացվել է Շենիկ և Լեռնագոգ համայնքների և Նորապատի դպրոցի գազաֆիկացումը:
2. 399.4 մլն. դրամով իրականացվել է 8 դպրոցների վերանորոգման, 3 քաղաքների հինգ բնակելի բազմաբնակարան շենքերի տանիքների, Արմավիր բժշկական կենտրոնի մասնաշենքի և Վաղարշապատի հիվանդանոցի տանիքի վերանորոգման, Հուշակերտ համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքները:
3. 10.0 մլն. դրամով իրականացվել է Վարդանաշեն և Խորոնք համայնքների ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների համաֆինանսավորումը:
4. 66.0 մլն. դրամի չափով ցուցաբերվել է աջակցություն 8 համայնքների 10 մանկապարտեզների վերանորոգման համար:
5. 80.95 մլն. դրամ տրամադրվել պետական աջակցություն, որից 26.7 մլն. դրամ՝ Մայիսյան համայնքի հրդեհված բնակելի շենքի 4 ընտանիքների բնակարանային ապահովման և 53.4 մլն. դրամ՝ Լենուղի համայնքի 2 վթարային բազմաբնակարան բնակելի շենքի 8 ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով:
6. 17.9 մլն. դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել ջրօգտագործող ընկերություններին՝ մարզի կարկտահարված Արգինա համայնքին հողի հարկի մասնակի և ոռոգման ջրի վարձի փոխհատուցման համար:
7. 10.0 մլն. դրամ՝ նախագծահետազոտական ծախսերի համար:

Ուսումնասիրվել և հաշվարկվել է մարզում 2015թ. նոյեմբերի 13-ին ուժեղ քամու և պտտահողմի հետևանքով շուրջ 15 համայնքներում շենքերին և շինություններին պատճառած վնասի չափը և ներկայացվել է ՀՀ կառավարությանը՝ փոխհատուցում ստանալու խնդրանքով: ՀՀ կառավարության որոշմամբ տրամադրել է փոխհատուցում՝ 12.69 մլն. դրամի չափով:

Ուսումնասիրվել և ճշգրտվել է մարզում առկա վթարային օբյեկտների, ինչպես նաև առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող օբյեկտների ցանկը և ծրագրերում ներառելու նպատակով առաջարկություն է ներկայացվել համապատասխան մարմիններին:

Վերահսկողություն է իրականացվել համայնքների քաղաքաշինության գործունեությունների, այդ թվում նաև անօրինական շինարարությունների կանխման, կասեցման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ:

Կազմվել է ՀՀ Արմավիրի մարզի 2016-2018թթ. քաղաքաշինության, ճանապարհաշինության և էներգետիկայի ոլորտների ՄԺԾ ծրագրերը և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության, ՀՀ տրանսպորտի և կապի և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություններին:

Նոր կառուցվող և վերանորոգվող շենք-շինությունների նախագծման ու կառուցման աշխատանքներում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման նպատակով մարզպետի շրջաբերական գրությամբ առաջարկվել է բոլոր համայնքների ղեկավարներին՝ իրենց կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում պարտադիր ներառել հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումները, հետևել դրանց կատարմանը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության ավարտի փաստագրման ժամանակ:

Այլ ներդրումներով մարզում իրականացվել և շարունակվում են մի շարք ծրագրեր՝

1. գ.Գետաշենի միջն.դպրոցի վերանորոգում - «Հայաստանի մանուկներ» հիմնադրամ (CAOF)՝ 300011 ԱՄՆ դոլար
2. գ.Նալբանդյանի միջն.դպրոցի վերանորոգում -«Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ 236760.0հազ.դրամ:
3. Արևադաշտ համայնքում նոր դպրոցի շենքի կառուցում -Հայ կրթական հիմնարկություն՝ 110000 ԱՄՆ դոլար
4. Լենուղի համայնքում 510մ երկարությամբ ոռոգման նոր ջրանցքի կառուցում -«Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակում՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից:
5. Արազափ գյուղում խմելու ջրամատակարարման համակարգի բարելավմանն ուղղված ծրագիր՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի, ՎիվաՍել-ՄՏՍ, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համատեղ ջանքերով
6. Նորապատ համայնքում գյուղատնտեսական ծառայությունների կենտրոնի բացում՝ ՓՄՁ ԶԱԿ-ի «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակում՝ Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից:
7. Ոսկեհատ համայնքում մանրէաբանական ֆերմայի կառուցում՝ մասնավոր ներդրումներով:
8. Արմավիր քաղաքում աղբի վերամշակման և ջերմոցային տնտեսության կառուցում՝ հայ-չեխական «Գրինէկո-Կաս» ՍՊԸ-ի կողմից՝ 33 մլն.եվրո արժեքով:

Կազմակերպվել և համակարգվել է ենթակառուցվածքների, արդյունաբերական ձեռնարկությունների և անշարժ գույքի կադաստրի գործունեությունը.

1. Մարզի բնակչության շրջանում աղիքային վարակիչ հիվանդությունների և ջրային բռնկումների կանխարգելման հետ կապված մարզպետի շրջաբերական գրությամբ հանձնարարվել է համայնքների ղեկավարներին ձեռնարկել համապատասխան միջոցներ:
2. Ներկայացվել է ՀՀ կառավարություն 2015թ-ի առաջին և երկրորդ կիսամյակային, ինչպես նաև տարեկան հաշվետվությունները՝ «Առևտրի և ծառայությունների» բնագավառում համայնքների կողմից կատարված պարբերական վերահսկողության արդյունքների վերաբերյալ:
3. Ճշտվել է մարզում առկա հյուրանոցային տնտեսությունների ցանկը և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:
4. Մարզի համայնքների սանիտարական մաքրման և աղբահանության վիճակի վերահսկման նպատակով պարբերաբար ստուգայցեր են կատարվում մարզի համայնքներ:
5. Ճշտվել է մարզում առկա քարի վերամշակման արտադրամասերի ցանկը և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել մարզպետին:
6. 2015թ. առաջին կիսամյակում ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված բնակչությանը տրվող խմելու ջրի որակի մոնիտորինգի արդյունքներով հայտնաբերված թերությունները վերացնելու նպատակով հանձնարարվել է համայնքների ղեկավարներին ձեռնարկել համապատասխան միջոցներ:
7. Ճշտվել է մարզում առկա հասարակական սննդի օբյեկտների ցանկը և ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ տուրիզմի հետագա ընդլայնման և զարգացման նպատակով:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

Մարզն ընդգրկում է 135կմ միջպետական նշանակության, 82.8կմ հանրապետական նշանակության և 398.2կմ մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային և 1600կմ համայնքային նշանակության (կամ բնակավայրերի փողոցներ) ճանապարհներ:

Մարզի բոլոր համայնքները՝ բացառությամբ Երվանդաշատ, Բագարան, Կողբավան, Վանանդ, Տալվորիկ, Արտամետ համայնքների, կապված են տրանսպորտային կապով մարզկենտրոնի հետ: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոնների ուղղություններով գործում է 11 ավտոբուսային երթուղիներ և 9 միկրոավտոբուսային երթուղիներ, իսկ մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 14 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ:

2015թ. հունվարին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն է ներկայացվել ներմարզային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների հաստատված ցանկը և ժամանակացույցը: Մասնակցություն է ցուցաբերվել Արմավիր քաղաքի ներքաղաքային տրանսպորտային միջոցների կանոնավոր երթուղու 2 մրցույթի: Կազմակերպվել և անցկացվել են Արմավիրի ներմարզային կանոնավոր միկրոավտոբուսային 4 երթուղիների մրցույթներ:

Ուսումնասիրվել է ներմարզային երթուղիների ցանցը, տեխնիկական վիճակը, չվացուցակները և սպասարկման որակը:

ՀՀ պետական բյուջեից Արմավիրի մարզպետարանին մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանման ու շահագործման և ձմեռային պահպանման համար հատկացվել է 37.4 մլն. դրամ, որից 16.22 մլն. դրամը ծախսվել է 26.9կմ երկարությամբ ճանապարհների ընթացիկ պահպանման ու շահագործման համար, իսկ 1.18 մլն. դրամը՝ 13կմ ձմեռային պահպանության համար:

Ուսումնասիրվել է մարզային նշանակության ճանապարհների (398.2կմ) 90%, ըստ տարածաշրջանների, որոնց վերաբերյալ կազմվել են ընդունման և հանձնման արձանագրություններ, որը հաստատվել է ըստ կատարողականների և ներկայացվել վճարման:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հանձնարարականի՝ ուսումնասիրվել և մաքրվել է զբոսաշրջային գրավչության տարածքներում և ճանապարհեզրերին կուտակված աղբը:

2015 թվականի հիմնանորոգվել է Տ-3-50(Մ-5-Նորապատ-Մրգաշատ-Արևիկ-Երասխահուն) ավտոճանապարհը, որի հիմնանորոգման աշխատանքները կավարտվեն 2016թ առաջին կիսամյակին: Մ-9 միջպետական ճանապարհի Հ-17-Քարակերտ 3,8կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները ավարտվել են:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Արմավիրի մարզի 124211,4 հա վարչական տարածքում 97022,2հա-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 47381,1հա 2015թ. օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության մեջ՝ 31770,9հա վարելահողեր, 7120,1հա-ն խաղողի և 8490,1 հա-ն պտղատու այգիներ: Գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի տնօրինվել են հետևյալ կերպ.

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հ/հ	**Մշակաբույսի անվանումը**	**Տարածքը /հա/**	**Միջին բերքը գ/հա**	**Համախառն բերքը /հազար տոննա/**	**Այդ թվում՝ հավաքված է կրկնակի միջշարային տարածություններից**
1	Հացահատիկ	5883,6	44,1	25,93	--
2	Հատիկաընդեղեն	319,9	37,9	1.47	0,257
3	Կարտոֆիլ	1439,2	356,1	53,18	1,937
4	Բանջարեղեն	11523,1	349,7	418,11	15,15
5	Բոստան	4432,1	412.2	182,7	
6	Բազմամյա և միամյա խոտաբույսեր	9434,4	165,8	167,9	11,466
7	Պտուղ	8490,1/7173,5	137,0	98,345	
8	Խաղող	7120,1/6410	211,5	135,547	
Ընդամենը		47381,1			

2015թ. գյուղատնտեսական տարում 2014թ-ի հետ համեմատությամբ մարզում ավել է օգտագործվել 1482,6հա հողատարածություն:

2015թ. մարզում հիմնվել են 500,14հա բազմամյա տնկարքներ, որից 268,79հա-ն պտղատու և 231,35 հա խաղողի այգիներ: Արդեն 5-րդ տարին է մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 8000հա, որը վկայում է, որ գյուղատնտեսության արտադրության մեջ վերականգնվում է տնտեսությունների մասնագիտացումը գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտղատու և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ:

2015թ. գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք: Ինչպես հանրապետության, այնպես էլ մարզի վարչական տարածքն ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից: 2015թ. մայիսի 15-ի, 28-ի, օգոստոսի 22-ի և հոկտեմբերի 4-ի կարկտահարությունները մեծ վնաս պատճառեցին մարզի գյուղատնտեսական արտադրությանը: Մարզային հանձնաժողովի կողմից համայնքային հանձնաժողովների ներկայացված տվյալների արդյունքում հաշվարկվել և պարզվել է, որ մարզի 15 համայնքների, որոնցից 5-ը կրկնակի անգամ, 1129 գյուղացիական տնտեսություններին պատկանող 1641,3հա հողատարածությունները վնասվել են կարկտահարությունից, միջին վնասվածության աստիճանը կազմել է 70%, բերքի կորուստը կազմել է 22000 տոննա, որի վնասի չափը կազմել է 3.15 մլրդ. դրամ:

Կարկտահարության հասցրած վնասները հնարավորինս մեղմելու նպատակով ՀՀ կառավարության և մարզպետի կողմից փոխհատուցվել է հողօգտագործողների հողի հարկի և ոռոգման ջրի վարձի գումարները, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» հաստատված ծրագրով մարզի 405 ընտանիքներին տրամադրվել է 76.16 մլն դրամ գումար:

Կարկտահարության ռիսկերը մեղմելու նպատակով մարզի 2 համայնքներում՝ Բագարան, Երվանդաշատ տեղակայվել են 8 հակակարկտային կայաններ:

Հաշվետու տարում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսական բոլոր մթերքների արտադրության ծավալները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը՝ 7-58%, բացառությամբ հացահատիկի, որը ցանքատարածությունների կրճատման արդյունք է:

2015թ. ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 907 տոննա պտուղ, 13212 տոննա բանջարեղեն և 78813տոննա խաղող, կամ մթերումների ծավալը 12%-ով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: Մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտներին և արտահանող կազմակերպություններին գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում:

Կազմակերպվել և համակարգվել են համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել է 58089 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր՝ 20637, մանր եղջերավոր՝ 96551, խոզեր՝ 20506, թռչուններ՝ 1230206: 2015թ. ընթացքում արտադրվել է 7102տոննա տավարի, 2078տոննա ոչխարի, 800 տոննա խոզի, 1072 տոննա թռչնի միս, 500 տոննա ձուկ, 50200 տոննա կաթ, 191,7 տոննա բուրդ և 68 մլն. հատ ձու:

Համակարգվել և վերահսկվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը, հակահամաճարակային միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ:

Համակարգվել է մարզում գործող «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ի 2 մասնաճյուղերի և 7 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը՝ ոռոգման համակարգի սպասարկման, կառուցման ու վերականգնման, ոռոգման ջրի վարձավճարների գանձման ուղղությամբ:

Վերահսկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների, մայր ջրանցքների և ջրամղիչ կայանների մաքրման և վերականգնման աշխատանքները: Արդյունքում՝ 317,4կմ միջտնտեսային, 4892,5կմ ներտնտեսային ցանցերը, 350 խորքային հորերը և 74 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է 2015թ. ապրիլի 1-ից:

Մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել համայնքների հաշվեկշռում գտնվող ոռոգման ներտնտեսային ցանցերի վերականգնման ուղղությամբ:

Հաշվետու տարում մարզի ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ

1. Թվով 19 համայնքներում վերականգնվել է 36 խորքային հորեր՝ 268,91մլն դրամ արժեքով:
2. Նորակերտ համայնքում 1,75կմ երկարությամբ մետաղական խողովակներով ջրագծի անցկացում՝ 36,04 մլն. դրամ արժեքով:
3. Ղարաղալայի պոմպակայանում ագրեգատի ձեռք բերում 9,6 մլն. դրամ արժեքով:
4. Թվով 9 համայնքներում մաքրվել է 42,2 կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց:

Համաշխարհային բանկի վարկային ծրագրով

1. Տանձուտի միջտնտեսային ջրանցքի 17կմ երկարությամբ հատվածի և Տանձուտ համայնքի 0,7կմ երկարությամբ ներտնտեսային ցանցի վերակառուցում՝ 1,64մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:
2. Ղարաղալայի միջտնտեսային ջրհան կայանի հեռացնող ջրանցքի 5կմ հատվածի վերակառուցում և Նոր-Կեսարիա համայնքի 2կմ երկարության ներտնտեսային ցանցի վերակառուցում LR -6 կիսախողովակներով՝ 232,56 մլն. դրամ արժեքով:
3. Արգինայի պոմպակայանի հեռացնող ջրանցքի 1,55կմ երկարությամբ հատվածի վերակառուցում՝ 160 մլն. դրամ արժեքով:

ՋՕԸ-ի միջոցներով

1. Առատաշեն համայնքում 0,9կմ երկարությամբ մետաղական խողովակներով ջրագծի անցկացում՝ 11,0 մլն. դրամ արժեքով:

Կատարված աշխատանքները ոչ միայն բարելավել են ջրամատակարարումը, այլ նաև զգալիորեն կրճատել են համակարգում դեռևս գոյություն ունեցող կորուստները:

2015թ. ընթացքում դրական տեղաշարժեր են արձանագրվել մարզում ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Տալվորիկ համայնքում շուրջ 100հա հողատարածություն ոռոգվում է անձրևացման եղանակով, իսկ Արևադաշտ համայնքի 280հա խաղողի այգիների, ինչպես նաև ավելի քան 150հա ջերմատնային տնտեսությունների ոռոգումն իրականացվում է կաթիլային եղանակով:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 32636 ջրօգտագործողներին մատակարարվել է 243,2մլն. մետր խորանարդ ոռոգման ջուր 2,675 մլրդ. դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 1,629 մլրդ. դրամ կամ գանձման մակարդակը կազմել է 60,9%:

Ուսումնասիրվել և գույքագրվել են մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացվել ՀՀ կառավարություն:

Մարզպետի մշտական ուշադրության կենտրոնում են եղել հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: 2015թ. պետական բյուջեի միջոցներով 9 համայնքներում մաքրվել է 42,2 կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց: Այս բնագավառում դեռևս հիմնախնդիր

է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

Ուսումնասիրվել, քննարկվել և համակարգվել են համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման գործընթացները: Գարնանացանի նախապատրաստական աշխատանքների և ընթացքի վերաբերյալ հարցերը ներկայացվել են մարզխորհրդի նիստերում:

Հայաստանի Հանրապետությունում 2010-14թթ. սերմնաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում 2015թ. գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուների հայտերը սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: 2015թ. գարնանացանի և աշնանացանի աշխատանքները խթանելու նպատակով գյուղացիական տնտեսություններին որպես աջակցություն տրամադրվել է.

1. 50655կգ գարնանացան գարու՝ 1կգ-ը 130դրամով սերմացու, որը բաշխվել է 31 համայնքների 150 շահառուների, որոնք 253,47հա-ի վրա կատարել են ցանքսի աշխատանքներ:
2. 3307կգ առվույտի՝ 1կգ-ը 1500 դրամով սերմացու, որը բաշխվել է 16 համայնքների 95 շահառուների, որոնք 132,46հա-ի վրա կատարել են ցանքս:
3. 350կգ եգիպտացորենի անվճար սերմացու, որը բաշխվել է 2 համայնքների 7 շահառուների, որոնք 14հա-ի վրա կատարել են ցանքս:
4. 290 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ 1կգ-ը 160 դրամով բերքահավաքի ժամանակ վճարելու պայմանով, որը հատկացվել է 34 համայնքների 553 շահառուների, որոնք 968,58 հա-ի վրա իրականացրել են ցանքսի աշխատանքներ:

Ուսումնասիրվել է մարզի գյուղացիական տնտեսությունների պարարտանյութերի նկատմամբ ունեցած պահանջարկը: Մեծ ծավալի աշխատանքներ են տարվել տեղական արտադրության էկոլոգիապես մաքուր կենսապարարտանյութերի շրջանացումը մարզում ապահովելու նպատակով: Մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2015թ. հատկացվել է.

1. 7000 տոննա ազոտական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 6710,25 տոննան, որը բաշխվել է թվով 13521 շահառուների
2. 310 տոննա ֆոսֆորական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 161,75 տոննա
3. 285 տոննա կալիումական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 128,6 տոննա
4. 2000000 լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 439224 լիտր, որը բաշխվել է 1953 շահառուների:

Համակարգվել է մարզի տարածքում գործող ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի մասնագիտական ծառայությունների գործունեությունը և մկնանման կրծողներով տարածվածության հաշվառման մոնիտորինգի իրականացումը: Կատարված մոնիտորինգի արդյունքներով մարզին հատկացվել է 376կգ Ռոդիֆակում տեսակի մկնասպան պրեպարատ, որը բաշխվել է մարզի 45 համայնքների, որոնք 4712 հա-ի վրա իրականացրել են պայքարի աշխատանքներ:

Եթե 2012 թվականին մարզի Գայ, Արևաշատ, Փարաքար համայնքների և Էջմիածին քաղաքի մորմազգի կուլտուրաների վրա էր հայտնաբերվել կարտոֆիլի և լոլիկի ցեցի վնասի հետքեր, ապա հաշվետու տարում այն մեծացնելով տարածվածության արեալը՝ ընդգրկել է մարզի գրեթե բոլոր համայնքները: Ցեցի հասցրած վնասները մեղմելու նպատակով ԳԱՄԿ-ի հետ համատեղ իրականացվել են սեմինարներ և դաշտային օրեր, գյուղացիական տնտեսություններին բաժանվել է թեմային նվիրված տեղեկատվական թերթիկներ և գրքույկներ, պայքարի միջոցառումների

վերաբերյալ գյուղացիական տնտեսություններին պարբերաբար խորհրդատվություն է տրվել մարզի տարբեր հեռուստաընկերությունների եթերներով և լուսաբանվել մարզային «Հայ ֆերմեր» թերթում: ՀՀ կառավարության համապատասխան որոշումների պահանջների համաձայն՝ 90 համայնքներում տեղադրվել են 1540 հատ ֆերոմոնային թակարդներ, քանդվել են Աղավնատուն, Նորակերտ, Այգեկ, Նորապատ համայնքներում ֆիլոքսերա վնասատուով վարակված 9,24 հա խաղողի այգիները, որտեղ իրականացվել են կարանտին բոլոր միջոցառումները և թվով 21 այգետերերին՝ երեք տարվա կորցրած բերքի կորուստի դիմաց տրվել է 28,612 մլն. դրամ սոցիալական աջակցություն:

Համակարգվել է ԳԱՄԿ-ի գործունեությունը՝ գյուղատնտեսական արտադրության ոլորտին օգնություն ցուցաբերելու, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, բիզնես-ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների կազմակերպման բնագավառներում:

Ուսումնասիրվել է գյուղատնտեսական արտադրության վարկավորման գործընթացը: Հիմնական վարկատուն եղել է Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկը, որը հաշվետու տարում մարզի 93 համայնքների 8937 վարկառուներին տրամադրել է 8,64 մլրդ դրամ վարկ, որից 2,98 մլրդ. դրամ վարկը պետական սուբսիդավորմամբ:

Մարզում կանաչապատ տարածքների ավելացման ուղղությամբ «Հայաստան ծառատունկ» ծրագրի միջոցով 2015թ. կազմակերպվել ու իրականացվել են տնկումներ շուրջ 5095 ծառերի և թփերի տնկիների: Մարզի 18 համայնքների տարաբնույթ կազմակերպություններում իրականացրվել են ծառերի ու թփերի հիմնումներ՝ ավելի քան 5հա ընդհանուր մակերեսով:

Աշխատանքներ են տարվել մարզի տարածքում ստորերկրյա ջրային պաշարների արդյունավետ օգտագործման, առկա հորատանցքերի ուսումնասիրման ուղղությամբ: ՀՀ կառավարության կողմից ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովների հետ համատեղ ուսումնասիրվել ու գնահատվել են առկա հորատանցքերը, արդյունահանված ջրի ծավալները, կոնսերվացման ու լիկվիդացման ենթակա հորատանցքերի քանակը և գտնվելու վայրերը: Կատարված հետազոտությունների հիման վրա՝ 2015թ. մարզում փականային ռեժիմի է բերվել 8 հորատանցք:

Համակարգվել են շրջակա միջավայրի և բնապահպանության օրենսդրության կենսագործման աշխատանքները: Համակարգել և կազմակերպել են օգտակար հանածոների արդյունահանման համար հողհատկացման տարածքների արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանման հարցերը: Կատարված ուսումնասիրությունների և ստուգայցերի արդյունքները ամփոփվել և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն:

Մարզի տարածքում բնապահպանական իրավիճակի ու ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հաշվետու տարում ընդարձակ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ բնապահապանության նախարարություն:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

2015թ. ընթացքում հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով ՀՀ կառավարություն են ներկայացվել մարզի Դալարիկ, Նոր Արմավիր, Մայիսյան, Տանձուտ, Գայ, Մերձավան և Լենուղի /ընթացքի մեջ են/ համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործերը: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով համաձայն ՀՀ կառավարության որոշման ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010թ. հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N 186-Ն հրամանի դրույթների՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ, Մայիսյան, Հացիկ, Լենուղի գյուղական համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առաջարկությունները: Ստացվել են Ջրառատ, Մայիսյան և Հացիկ համայնքների համապատասխան եզրակացությունները, իսկ Լենուղի համայնքի առաջարկությունն ընթացքի մեջ է:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ղեկավարի կողմից մարզ կատարված աշխատանքային այցելության շրջանակներում մարզի մի շարք համայնքներում (Ակնաշեն, Բագարան, Աղավնատուն և Ծաղկալանջ) առկա հողային հարաբերությունների ոլորտում գոյություն ունեցող հողային վիճային հարցերին տրվել են պարզաբանումներ և դրանց ճշտման համար ցուցաբերվել է աջակցություն:

2015 թվականի ապրիլի 20-ից մայիսի 6-ը ներառյալ մարզի մի շարք համայնքներում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության հետ համատեղ իրականացվել են տեսչական ստուգումներ: Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են ցուցումներ՝ հայտնաբերված խախտումները եռամսյա ժամկետում վերացնելու համար:

Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը:

Կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի ք.Էջմիածին, Դալարիկ, Մայիսյան, Արտամետ, Ամբերդ, Նոր Կեսարիա, Վանանդ, Բամբակաշատ, Հացիկ, Մրգաշատ, Շենիկ Գետաշեն, Աղավնատուն, Կողբական, Նալբանդյան, Գետաշեն, Նոր Արտագերս, Քարակերտ, Զարթոնք, Ջրաշեն, Բաղրամյան /Բաղր./ համայնքների համար տրվել է եզրակացություն՝ բարձրաժեք հողատեսքերը ցածրաժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ:

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված մարզի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի միավորների ցանկերը փոխանցվել են համայնքներին և առաջարկվել է լրացնել ֆիզիկական անձ հանդիսացող գրանցված իրավունքի սուբյեկտների թերի նույնականացման տվյալները, աշխատանքներն ընթացքի մեջ են:

Առողջապահության բնագավառ

Մարզի առողջապահական համակարգում գործում են 59 բուժհաստատություններ, որոնցից 52-ը համայնքային ենթակայության և 7-ը մարզպետարանի ենթակայության, դրանցից երկու բժշկական կենտրոն, երկու պոլիկլինիկա, մեկ հիվանդանոց, մեկ ծննդատուն, մեկ մարզային արյան կայան: Մարզում հիվանդանոցային մահճակալների թիվը 389 է:

2015թ. հիմնանորոգվել և շահագործման է հանձնվել նաև «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական հատվածը՝ հագեցվելով ժամանակակից հիմնական բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: Ընդհանուր ներդրումը կազմել է շուրջ 82.4 մլն դրամ:

Արդիականացման արդյունքում բարելավվել է բնակչությանը մատուցվող ծառայությունների ֆիզիկական մատչելիությունը և որակը: Բարելավվել է նաև բժշկական կենտրոնի գործունեության ցուցանիշները:

2000-2014թթ. ընթացքում ՀԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում մարզում վերանորոգվել և կառուցվել են ընդհանուր առմամբ 29 համայնքային բուժհաստատություններ (կառուցում՝ 14, վերանորոգում 15): Ամբուլատորիաներ են կառուցվել Հայթաղ, Զարթոնք, Արգավանդ, Ջանֆիդա, Գետաշեն, Հուշակերտ, Այգեշատ, Թաիրով, Մարգարա, Արշալույս, Սարդարապատ, Բաղրամյան-1, Աղավնատուն և Ակնալիճ համայնքներում: Երվանդաշատ, Քարակերտ, Նալբանդյան, Արագած, Նոյակերտ, Մրգաշատ, Արևիկ, Խորոնք, Դալարիկ, Առատաշեն, Փշատավան, Ալաշկերտ, Գեղակերտ, Ապագա և Բամբակաշատ համայնքներում հիմնանորոգվել են առկա շինությունները:

2015թ.-ին մեկնարկել է Արմավիրի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքի տանիքի վերանորոգման աշխատանքները, որի համար տրամադրվել է 35.0 մլն դրամ պետական բյուջեով, որը պլանավորվել է ավարտին հասցնել տարեվերջին:

Ընդհանուր առմամբ վարկային ծրագրերով Արմավիրի մարզի ամբուլատոր պոլիկլինիկական օղակում կատարվել է շուրջ 1 մլրդ. 141 մլն դրամի ներդրում:

Մարզի բուժհաստատություններում աշխատող բժիշկների ընդհանուր թիվը 394, միջին բուժանձնակազմի թիվը՝ 932: 2014թ.-ի համեմատ բժիշկների ընդհանուր թիվը ավելացել է 4 մասնագետով, իսկ բուժանձնակազմի թիվը՝ 7-ով: Մարզի ամբուլատոր համակարգն հիմնականում ապահովված է բժշկական և բուժքույրական կադրերով: Հիվանդանոցային ծառայությունը կարիք ունի մի շարք նեղ մասնագետների՝ մաշկաբան, ակնաբույժ, մանկաբույժ, վիրաբույժ, շտապ օգնության բժիշկ, հոգեբույժ-թմրաբան, ուռուցքաբան:

Մարզում առկա է 26 շտապ օգնության մեքենա, որից 2-ը՝ ռեանոմոբիլ են, 1-ը՝ «Ford -Tranzit, 1-ը՝ «Ford –E 360»: Շտապ օգնության մեքենաներից 20-ը բավարար ֆունկցիոնալ վիճակում են, 6-ը՝ հնամաշ: Մարզին անհրաժեշտ է 2 ռեանոմոբիլ շտապ օգնության մեքենաներ:

2015թ.-ին գրանցվել է 2541 ծնունդ, որից մարզում՝ 1483 ծնունդ, մինչև 1 տարեկան երեխաների 9 մահ, մայրական մահացության 1 դեպք:

Դեղորայքային ապահովվածությունը բավարար է: 2015թ. մարտ ամսից սկսած «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում և սոց.փաթեթով նախատեսված շահառուների 85%-ը հետազոտվել է մարզի բուժհաստատություններում:

Սոցիալական ապահովության բնագավառ

2015 թվականի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են մարզի երեք ՍԾՏԳ-ներում ընտանիքների անապահովության գնահատման համակարգով հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքները: 2015թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 7423 է, որոնցից նպաստառու են 4737-ը:

Բովանդակություն	Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան	**Ընդամենը մարզում**
Փաստագրված ընտանիքների թիվը	2812	3759	852	**7423**
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	1777	2367	593	**4737**
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը	451	601	93	**1145**
Հրատապ դրամական օգնություն ստացած ընտանիքների թիվը	799	972	252	**2023**
Ավանդի փոխհատուցման գումար ստացած ընտանիքների թիվը	123	135	14	**272**

Հաշվետու ժամանակաշրջանում նպաստների և ավանդի փոխհատուցման գումարի վճարման համար ֆինանսավորումը կազմել է 2,405,580.5 հազ. դրամ, որից փաստացի վճարվել է 2,372,944.3 հազ.դրամ:

2015թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 5803 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 4813-ը: Գործակալություններում հաշվառված աշխատանք փնտրող անձանցից աշխատանքի են տեղավորվել 406 մարդ:

«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրով իրականացվել է մարզի գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսության վերականգնման ծրագիրը: Արդյունքում, թվով 405 ընտանիքներին տրամադրված ֆինանսական աջակցության չափը կազմել է 76,168.1 հազ. դրամ:

Արմավիրի զբաղվածության կենտրոնի կազմակերպած «Աշխատանքի տոնավաճառի» աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունն է ունեցել մարզպետարանը: Մարզի գործարարների, մարզային ենթակայության կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ, հատկապես երիտասարդ աշխատանք փնտրողները /նաև հաշմանդամություն ունեցող անձինք/ տեղեկացել են թափուր աշխատատեղերի մասին, ինչը լուսաբանվել է տեղական ԶԼՄ-ներով: Արդյունքում, 11 անձանց հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր:

Արմավիրի մարզային սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոններում հաշվառված են 39592 կենսաթոշակառուներ, այդ թվում ըստ տարածքների՝

Արմավիրի ՏԿ - 17509 մարդ
Վաղարշապատի ՏԿ - 19693 մարդ
Բաղրամյանի ՏԿ - 2390 մարդ:

ՀՀ Արմավիրի «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2015թ. դրամական օգնություն է հատկացվել 518 ընտանիքների՝ 20910.0 հազ. դրամ գումարի չափով:

ՀՀ վարչապետի 19.05.2015թ. «Դպրոցականների 2015թ. ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 400-Ա որոշման համաձայն՝ կազմակերպվել է մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան թվով 303 երեխաների ամառային հանգստի /երեք հերթափոխով՝ 20-ական օր/ կազմակերպումը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:

Առողջարանային և վերականգնողական բուժման ուղեգրեր են տրամադրվել 160 հաշմանդամների, այդ թվում Ջերմուկ՝ 26, Արզնի՝ 17, Գանձաղբյուր՝ 87, Վանաձոր՝ 13, Արարատ՝ 17:

Կազմակերպվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի» 4 նիստեր, որտեղ քննարկվել են հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելու, ինչպես նաև մարզում ներառական կրթության խնդիրները:

Ճշգրտվել և իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզի պրոթեզ-օրթեզի կարիք ունեցող հաշմանդամների թիվը՝ Արմավիրի և Բաղրամյանի տարածաշրջաններ՝ 238, Վաղարշապատի տարածաշրջան՝ 197: «Սատար» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց տեղում տրամադրվել են պրոթեզի 77 և օրթոպեդիկ 37 կոշիկներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող արցախյան պատերազմում զոհված՝ 1 և հաշմանդամ դարձած՝ 2 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք:

2015թ. ընթացքում անհատույց պետական ֆինանսական աջակցություն է ստացել զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողի /ազատամարտիկի/ 5 ընտանիք:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

Մարզի հանրակրթական և հատուկ /օժանդակ/ դպրոցներից պարբերաբար ստացվել են տեղեկություններ պարտադիր ուսուցումից դուրս մնացած աշակերտների մասին և ձեռնարկվել հնարավոր բոլոր միջոցները նրանց դպրոցներ ինտեգրելու համար:

Կատարվել են այցելություններ մարզի տարբեր հանրակրթական և հատուկ/օժանդակ/ դպրոցներ՝ հատուկ ուշադրություն հրավիրելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրներին: Վկայագրվել է թվով 609 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, որոնք ընդգրկվել են մարզի 26 ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում՝ իրենց կարիքներին համապատասխան կրթական ծրագրերում:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից ստացվել են վարչության ենթակա ՆԳ բաժիների ԱԳԲ-ում հաշվառման մեջ գտնվող և փաստացիորեն հայտնի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող, ինչպես նաև ՀՀ Ան ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքից անչափահաս երեխաների վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանց շրջանում համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով: Իրականացված աշխատանքների արդյունքում 21 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 26 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, իսկ 4 անչափահաս տեղավորվել է Վարդաշենի թիվ 1 դպրոցում:

Կատարվել են տուն-այցեր ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ենթակա բաժինների ԱԳԲ-ներում հաշվառման վերցված անչափահասների ընտանիքներ՝ նրանց կյանքի պայմանների, դրսևորած վարքագծի, ինչպես նաև ընտանիքների ուսումնասիրման նպատակով:

Սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած թվով 3 երեխաների անձնական գործերը վերցվել են տարածքային հաշվառման:

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ՀՀ 20 քաղաքացիներ վերցվել են հաշվառման որպես որդեգրել ցանկացող անձինք և 10 երեխա վերցվել է հաշվառման որպես որդեգրման ենթակա երեխա: 1 երեխայի հետագա խնամքը կազմակերպվել է խնամատար ընտանիքում: Կատարված հետևողական աշխատանքների շնորհիվ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն երեխաներ չեն ուղորդվել, իսկ թվով 6 երեխաներ դուրս են գրվել: Մանկատուն է տեղավորվել թվով 5 երեխա, որից 4-ը՝ մասնագիտացված: Ընտանիք է վերադարձել թվով 2 երեխա:

Կրթության բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում Արմավիրի մարզում գործել են մարզային ենթակայության

- 91 միջնակարգ
- 21 հիմնական
- 2 հատուկ դպրոցներ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության

- 6 ավագ դպրոցներ
- 1 կրթահամալիր
- 1 միջնակարգ դպրոց
- 1 ռազմամարզական վարժարան:

Մարզում առկա քաղաքային և գյուղական 62 մանկապարտեզներում գործել են 185 խումբ՝ 5134 երեխաներով:

Մարզային ենթակայության դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվը 2015թ. սեպտեմբերին կազմել է 31610, որից 3738-ը՝ առաջին դասարանցիներ:

2015 թվականին 1734 աշակերտներ ստացել են միջնակարգ կրթություն, հիմնական դպրոցներն են ավարտել 1340 աշակերտներ:

2014-2015 ուսումնական տարում գերազանց առաջադիմություն է ցուցաբերել 4875 աշակերտ, գերազանցության նմուշի հիմնական կրթության վկայական է ստացել 46 շրջանավարտ:

Մարզից պետական բուհական ընդունելության քննությունների արդյունքում շուրջ 568 շրջանավարտներ ընդունվել են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդել է 3276 ուսուցիչ, որոնցից 9-ը ստացել են տարակարգ: Ատեստավորվել են 471 ուսուցիչներ, 2015թ. վերապատրաստվել են ևս 428 ուսուցիչներ, որոնց ատեստավորումից հետո ավարտվել է ատեստավորման հնգամյա ծրագիրը:

2015-2016 ուսումնական տարվա սկզբից ներառական կրթություն են իրականացնում մարզի 17 դպրոցներ՝ 537 երեխաների համար:

2015թ. ստացվել է 1736 հատ միջնակարգ կրթության սովորական նմուշի ատեստատ, 1375 հատ սովորական նմուշի և 50 հատ հատուկ՝ գերազանցության նմուշի հիմնական ընդհանուր նմուշի վկայականներ, վերականգնվել է քաղաքացիների կորած և խոտանված դպրոցական ավարտական փաստաթղթերը:

Մարզի դպրոցները համագործակցում են տարբեր միջազգային կազմակերպությունների և բազմաթիվ կրթական ծրագրերի հետ: Սարդարապատի միջնակարգ դպրոցը ստացել է «Գերմաներեն լեզվի դիպլոմի դպրոց» կարգավիճակ՝ A2 B1 մակարդակների ծրագրով:

Անցկացվել են «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու և ՀՀ կրթության և գիտության նախարարության համատեղ հայտարարած «Լավագույն ուսուցիչ» մրցույթների մարզային փուլերը, հաղթող ճանաչվածները մասնակցել են մրցույթների հանրապետական եզրափակիչ փուլերին:

Մարզում անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը՝ 16 առարկաներից: Օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցել է 4734 աշակերտ, որից 3159-ը օնլայն տարբերակով: Տարածքային փուլը հաղթահարած 120 դպրոցի 515 աշակերտ մասնակցել է մարզային փուլին, որի արդյունքում 72 աշակերտ երաշխավորվել է մասնակցել է հանրապետական փուլին: Արդյունքում, 1 աշակերտ պարգևատրվել է առաջին կարգի դիպլոմով, ևս 22 աշակերտներ պարգևատրվել են դիպլոմներով և գովասանագրերով:

Համագործակցելով Հայաստանի Շախմատի ակադեմիայի հետ՝ կազմակերպվում է «Շախմատ» առարկան դասավանդող ուսուցիչների 2015թ. վերապատրաստումը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներն ունեն շախմատի բարեկարգ և կահավորված դասասենյակներ:

Անցկացվել է ՀՀ դպրոցականների 2015-2016 ուստարվա շախմատի օլիմպիադան:

Մարզի դպրոցները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել և հաջողությունների հասել «Ռուսական արջուկ, լեզվաբանություն բոլորի համար», «Մեղու», «Կենգուրու» մաթեմատիկական միջազգային մրցույթներում:

Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N4 հիմնական դպրոցի աշակերտներ Շանթ Հարությունյանը և Բարսեղ Աթայանը հաղթող են ճանաչվել «Արմենիա» հեռուստաընկերության կողմից նախաձեռնած՝ «Ամենախելացին» նախագծի 2015թ. եթերաշրջանում, իսկ նույն դպրոցի երգչախումբը առաջին մրցանակի է արժանացել «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի 8-րդ հանրապետական մրցույթ-փառատոնում:

2015թ. ընթացքում արտերկրից մարզի դպրոցներ է ընդունվել 244 աշակերտ:

Որպես նորարարական նախաձեռնություն 2015 թվականի ընթացքում կազմակերպվել է «Տարվա լավագույն դպրոց» մարզային մրցույթը, որի արդյունքում որոշվել են մրցույթի չորս անվանակարգերում հաղթող ճանաչված դպրոցները: Գլխավոր մրցանակին է և «Լավագույն դպրոց» մրցանակին է արժանացել Վաղարշապատի թիվ 4 հիմնական դպրոցը:

Ստացվել և դպրոցներին է բաշխվել 77 անուն 97422 դասագիրք, 24556 կտոր մեթոդական ձեռնարկներ և ուսումնաօժանդակ գրականություն և այլ նյութեր: Կազմակերպվել և վերահսկվել է դասագրքերի բաշխման և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերի հատկացման գործընթացը:

«Դպրոցական սնունդ» ծրագրում ընդգրկված են 38 դպրոցներ, տարրական դասարանների 5523 աշակերտներով:

Գազով լոկալ ջեռուցում ունեն մարզի 88, իսկ հեղուկ վառելիքով ջեռուցվում են 20, էլեկտրականությամբ՝ 6 դպրոցներ: Աշխատանքներ են կատարվում համայնքների գազաֆիկացմանը զուգահեռ լոկալ ջեռուցմամբ ապահովել մարզի մյուս դպրոցները:

Մարզի 95 դպրոցներ ապահովված են ուսումնական զենքով, պահանջներին համապատասխան պատրաստվել են զենքի պահպանման սենյակները, միացվել պահպանման ձայնաազդանշանային համակարգերը:

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառ

Արմավիրի մարզում առկա է 85 մշակույթի տուն, 8 թանգարան, 102 գրադարան, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ, 12-ը քաղաքային, 89-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1162750 կտոր գիրք:

2015թ. մարզում գործում է 21 գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն (12 երաժշտական, 7 արվեստի, 1 գեղարվեստի դպրոց և 1 արվեստի պետական քոլեջ, որին կից նաև գործում է երաժշտական և արվեստի պրակտիկայի բաժին), որտեղ սովորում է 2757 աշակերտ, դասավանդում է 321 մանկավարժ: Դասավանդվում են դաշնամուր, ազգային, լարային, փողային նվագարաններ, երգեցողություն (դասական, ժողովրդական, էստրադային), ակորդեոն, կիթառ, կերպարվեստ, դեկորատիվ կիրառական արվեստ, պարարվեստ մասնագիտությունները:

Մարզում գործում է 3 հենակետային դպրոց՝ ք.Արմավիրի արվեստի, ք.էջմիածնի Մ.Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական և ք.էջմիածնի Ե. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցները:

Մարզում գործում է 30 մանկական երգչախումբ (10 երաժշտական և արվեստի, 15 հանրակրթական դպրոցներում, 5 այլ հաստատություններում): 2015թ. «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի 8-րդ հանրապետական մրցույթ-փառատոնում Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոցի երգչախումբը արժանացել է 1-ին մրցանակի, իսկ Արմավիր քաղաքի արվեստի դպրոցի երգչախումբը՝ 3-րդ մրցանակի:

Երաժշտական, արվեստի դպրոցներում և այլ հաստատություններում գործում է 40 լարային, փողային, քանոնահարների, դհոլահարների, դուդուկահարների, ժողովրդական նվագարանների, աշուղական երգի, ավանդական երգ ու պարի, ժամանակակից, ազգագրական պարային համույթներ:

Մարզի թվով 15 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում սովորող 163 աշակերտների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսված գումարը 2015թ. համար կազմել է 43478,0 հազ. դրամ:

2015թ. մեկնարկած «Սոլֆեջո» և «Երաժշտական գրականություն» (ճանաչողական վիկտորինա) միջմարզային ստուգատեսներին մասնակցել են 9 երաժշտական և արվեստի դպրոցների 43 աշակերտ:

ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Արմավիրի մարզի պետական ցուցակը ներառում է 186 հուշարձան՝ 121 պահպանական միավորով, որոնք տեղաբաշխված են մարզի 58 համայնքներում, և որոնց պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվել են ՀՀ օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորություններն ու գործառույթները:

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ վերանորոգվել և բարեկարգվել են ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում առկա հուշարձաններն ու դրանց հարող տարածքները:

ՀՀ մշակույթի նախարարի մարզ կատարած այցելության ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մարզի Արշալույս համայնքում հիմնել խաչքարագործության վարպետաց դպրոց, որի հետ կապված ծրագիր է ներկայացվել ՀՀ մշակույթի նախարարություն՝ 2016թ. պետական բյուջեով դպրոցի գործունեությունը ֆինանսավորելու համար:

- ՀՀ պետական բյուջեով 2015թ. վերանորոգվել են մարզի Շենիկ /50 մլն.դրամ/ և Բամբակաշատ /80 մլն.դրամ/ համայնքների մշակույթի տները:

• Ընթացքի մեջ են Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցու վերականգնման աշխատանքները, որի համար ՀՀ պետական բյուջեից 2015թ. հատկացվել է 20 մլն. դրամ:
• Մուսա լեռան հերոսամարտի 100-ամյա հոբելյանին ընդառաջ ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 23-ի N 826-Ն որոշմամբ 40 մլն.դրամ գումար է հատկացվել Մուսա լեռան հերոսամարտի հուշահամալիրի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելու նպատակով, որից 35 մլն. դրամ ՀՀ ՊՆ-ին, իսկ 5 մլն.դրամ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանին:
• Համայնքային բյուջեի միջոցներով ամբողջությամբ վերանորոգվել է Ջրարբի համայնքի մշակույթի տունը:
• Դալարիկ և Նորակերտ համայնքներում անհատ բարերարների միջոցներով կառուցվել են եկեղեցիներ:
• Մարզի մի շարք համայնքներում տեղադրվել են խաչքարեր և հուշարձաններ՝ նվիրված ցեղասպանության 100-րդ տարելիցին:
• 2015 թվականի սկզբներին պարսկահայ բարերարի կողմից Արմավիր քաղաքում բացվել է «Ժպիտ և Աշխատանք» մշակութային կենտրոնը, որտեղ կազմակերպվում են հանդիպումներ գրողների հետ, գրական ցերեկույթներ և երեկույթներ, ինչպես նաև ասմունքի և երաժշտական խմբակներ:
• 2015 թվականից մարզում սկսել է իր գործունեությունը ծավալել «ՄԱԴԼԵՆ» մշակութային կենտրոնը, որը մարզի տարբեր համայնքներում կազմակերպում է ազգային, ժողովրդական և ժամանակակից պարերի դասընթացներ, ինչպես նաև թատերարվեստի ուսուցում:
• Արմավիրի մարզի 5 հանրակրթական դպրոցներում ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան:

Մարզի մշակույթի բնագավառների ներկայացուցիչները մասնակցել են հանրապետական և միջազգային մրցույթների ու առաջնությունների՝ արժանանալով մրցանակների ու խրախուսանքների:

Աջակցություն է ցուցաբերվել մարզի տարածքում ավանդական տոների, ծեսերի, ուխտագնացությունների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը:

2015թ. մարզի համայնքներում կազմակերպվել են սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ, բազմաթիվ միջոցառումներ՝ պատանիների ու երիտասարդների մասնակցությամբ: Սպորտի ոլորտում մարզպետարանը համագործակցում է ինչպես մասնագիտական կառույցների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների հետ: Արմավիրի մարզում հիմնական գերակա մարզաձևեր են նախանշվել ծանրամարտը, բռնցքամարտը, ըմշամարտը, շախմատը:

Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցել են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի, միջազգային այլ առաջնություններին:

Տարվա նշանակալի ձեռքբերումներն են.

- Հունիս ամսին Լեհաստանի Վրոցլավ քաղաքում կայացած ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում հովտամեջցի Արմեն Կարապետյանը 77կգ քաշային կարգում նվաճել է ոսկե մեդալ:
- Օգոստոս ամսին Շվեդիայում կայացած մինչև 17 տարեկանների ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում «Սևան» մարզական հասարակական կազմակերպության Սամաղարի մանկապատանեկան մարզադպրոցի սան Կարեն Մարգարյանը նվաճել է արծաթե մեդալ 69 կգ. քաշային կարգում, իսկ նույն մարզադպրոցի սան Արսեն Մարտիրոսյանը՝ բրոնզե մեդալ 85 կգ. քաշային կարգում:

- Օգոստոս ամսին Հունգարիայում կայացած կանանց բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Գայ գյուղի բնակիչ Անուշ Գրիգորյանը դարձել է Եվրոպայի չեմպիոն:
- Մարտ ամսին անցկացվել է Դպրոցականների շախմատի հանրապետական օլիմպիադայի մարզային փուլը, որի հաղթող ճանաչված Վաղարշապատի N 12 հիմնական դպրոցի թիմը մայիսի 2-5-ը Երևան քաղաքում կայացած հանրապետական եզրափակիչ փուլում գրավել է 3-րդ տեղը:
- Ապրիլի 11-20-ը Երևան քաղաքում անցկացված Հայաստանի շախմատի մինչև 10 տարեկանների պատանեկան առաջնությունում Էջմիածնի N 12 դպրոցի աշակերտ Աստղիկ Հակոբյանը գրավել է առաջին տեղը՝ արժանանալով Հայաստանի չեմպիոնի կոչման:
- Նոյեմբեր ամսին ԱՄՆ Հյուսթոն քաղաքում կայացած ծանրամարտի աշխարհի առաջնությունում հայթաղցի Անդրանիկ Կարապետյանը նվաճել է փոքր բրոնզ, իսկ հայկաշենցի Սիմոն Մարտիրոսյանը՝ նույնպես փոքր բրոնզ:

2015թ. պետական բյուջեով 230 մլն. դրամ է հատկացվել Էջմիածին քաղաքում նոր մարզահամալիր կառուցելու համար:

Արտաքին կապեր

2015 թվականին Արմավիրի մարզը շարունակել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով՝ Արմավիրի մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

ՀՀ Արմավիրի մարզի և ՌԴ Յարոսլավլի մարզի միջև համագործակցության շրջանակում պայմանավորվածություններ են ձեռք բերվել Արմավիրի մարզում գործող ռուսական թեքումով դպրոցներին համապատասխան մեթոդական և տեխնիկական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: 2015թ. նոյեմբեր ամսին մարզ է այցելել ՌԴ Յարոսլավի նահանգապետ Սերգեյ Յաստրեբովի գլխավորած պատվիրակությունը, որն Հայաստանում էր չորրորդ հայ-ռուսական միջտարածաշրջանային ֆորումին մասնակցելու նպատակով:

Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի արձանագրային հանձնարարականների հիման վրա շարունակվել են Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան և Արևելյան Ատրպատականի նահանգների միջև բնապահպանական, գյուղատնտեսական և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

2015թ. առաջին կիսամյակում մարզ է այցելել Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության առաջին քարտուղարը և Իրանի Քուրդ քաղաքի ֆերմերային ասոցիացիայի ներկայացուցիչը: Իրանական կողմը հետաքրքրված էր Բաղրամյանի տարածաշրջանում պայմանագրային հիմունքներով մշակովի հողատարածքներ ձեռք բերելու և բանջարբոստանային կուլտուրաների մշակությամբ զբաղվելու հանարավորություններով: Հանդիպման ընթացքում ներկայացվել են առկա հնարավորությունները՝ մի քանի համայնքապետեր պատրաստակամություն են հայտնել ընդհանուր պայմանների շուրջ համաձայնության գալու դեպքում իրանական կողմին ժամանակավոր մշակության հանձնել շուրջ 1200-1300հա հողատարածք:

Մարզպետի հրավերով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի պաշտոնական միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստանում են գտնվել Արմավիրի մարզի գործընկերներ՝ Սլովակիայի Հանրապետության Տռնավայի նահանգի և Դանիայի Թագավորություն Օդերի համայնքի պատվիրակությունները, որոնք մարզպետի ուղեկցությամբ ապրիլի 24-ին այցելել են Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ դրել հուշակոթողին և ծաղիկներ խոնարհել անմար կրակի մոտ:

2015թ. հունիսի 1-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում մարզպետն այցելել է Չեխիայի Հանրապետություն: Դեռևս 2014թ. Չեխիայի Հանրապետությունում գտնվելու ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մարզում աղբի վերամշակմամբ զբաղվող ընկերություն հիմնելու ուղղությամբ: Ներկայումս հայ-չեխական «Գրինէկո-Կաս» ընկերության կողմից ընթացքի մեջ են Արմավիր քաղաքում աղբի վերամշակման գործարան և ջերմոցային տնտեսություն կառուցելու աշխատանքները:

2015թ. հունիսի 29-ին մարզ է այցելել Եվրոպայի ամենախոշոր մեծածախ առևտրի բազայի տնօրենը՝ ծանոթանալու մարզի ծիրանի, դեղձի, ինչպես նաև խաղողի այգիներին:

2015թ. հուլիսի 24-ին մարզ է այցելել ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան առաքելության տնօրեն Քերեն Հիլիարդը, ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրենը, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հիմնադիր Ռուբեն Խաչատրյանը՝ մասնակցելու Լուկաշին համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրին նվիրված միջոցառմանը:

2015թ. հուլիսի 30-ին մարզ է այցելել ռուսական «Գազպրոմ» առևտրական կենտրոնի տնօրենը և ռուսական այլ առևտրային կազմակերպությունների պատասխանատուներ՝ ծանոթանալու մարզի արտադրական հնարավորություններին և արտադրանքի իրացման շուկային:

2015թ. օգոստոսի 3-ին մարզ է այցելել ՌԴ Շախտի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ մասնակցելու Արմավիրի քաղաքային այգում ռուս ծանրորդ, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Վասիլի Ալեքսեևի բրոնզե կիսանդրիի տեղադրման արարողությանը:

2015թ. օգոստոսի 5-ին մարզպետն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգից ժամանած աշխատանքային խմբին, որը գլխավորում էր Պարսկաստանի պալատի խորհրդական, գործարար Ռամին Աղա Ասրին:

2015թ. օգոստոսի 29-ին մարզպետն ընդունել է Պարսկաստանից ժամանած մարզիկներին՝ Կարատե-դո ասոցացիայի նախագահի գլխավորությամբ:

Մարզպետարանի թվով 3 աշխատակիցներ գործուղվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության «Fujian foreign trade and economic cooperation officials' training centre» կազմակերպության կողմից կազմակերպված «2015 Seminar on Youth Business Initiation for Armenia» և «Ավանդական չինական մշակույթի ուսուցում և նրա զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետության համար» թեմաներով դասընթացներին մասնակցելու նպատակով:

2015թ. դեկտեմբերին մարզ է այցելել ՌԴ Վոլոգդայի նահանգապետի առաջին տեղակալ Ալեքսեյ Շեռլիգինի գլխավորած պատվիրակությունը: Նահանգապետի տեղակալը ներկայացրել է Վոլոգդա նահանգի տնտեսական, արտադրական և ներդրումային հնարավորությունները, որին հաջորդել է կողմերի քննարկումը՝ Արմավիրի մարզի և Վոլոգդա նահանգի միջև առևտրատնտեսական, գյուղատնտեսական, հումանիտար և տնտեսական ոլորտներում փոխգործակցության հաստատման հետ կապված հարցերի շուրջ:

2015թ. ընթացքում Արմավիրի մարզ է այցելել Վենետո նահանգի ներկայացուցիչը, քննարկվել են երկկողմ համագործակցություն սկսելու հարցեր: 2016 թվականի ընթացքում նախատեսվում է Իտալիայի Հանրապետության Վենետոյի նահանգապետի այցը Արմավիրի մարզ:

Տեղեկատվության բնագավառ

Ապահովվել է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակումը: 2015 թվականի ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել են շուրջ 151 մամլո հաղորդագրություններ, տարբեր մրցույթների հայտարարություններ, մարզպետի ընթացիկ և տարեկան հաշվետվությունները, մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային ծրագիրն ու կատարողականի գնահատման ակտը, մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի վերաբերյալ 17 փաստաթուղթ: Կազմակերպվել և իրականացվել է ավելի քան 40 հարցազրույց:

Ապահովվել է մարզպետի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակումը: 2015 թվականին ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է մարզպետի կողմից ընդունված 213 որոշում և արձակված 109 կարգադրություն: Իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզպետի այցերի, հանդիպումների, ընդունելությունների և մարզպետարանում անցկացվող նիստերի, խորհրդակցությունների, քննարկումների, բանակցությունների, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումների լուսաբանման կազմակերպումը, ինչպես նաև մարզպետի, մարզպետրանի աշխատակազմի պաշտոնատար անձանց ու զանգվածային լրատվության միջոցների ու այլ կազմակերպությունների միջև համագործակցությունը:

Մարզում լրատվական գործունեություն իրականացնող 3 հեռուստաընկերությունների՝ «ԱԼՏ», «Լույս», «Նոյ Հայաստան», «Հայրենականչ» թերթի, իսկ հանրապետական ԶԼՄ-ներից՝ «Հանրային հեռուստաընկերություն», «Արմնյուզ» և «Արմենիա» հեռուստաընկերությունների ու «Հանրային ռադիոյի» մարզային մշտական թղթակիցների ու լրատվական այլ գործակալությունների մշտական մոնիտորինգ իրականացվող էլեկտրոնային լրատվական կայքերի (armenpress.am, armlur.am, panorama.am, 168.am, hetq.am, hraparak.am, lragir.am, nwes.am,operativ.am, tert.am, slaq.am) կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող լուսաբանումների թիվը գերազանցել է 400-ը:

2015 թվականին մարզպետարանը հանդես է եկել 2 պարզաբանմամբ, պատասխանել է 11 գարավոր հարցման:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կայքում հրապարակվել է մարզի համայնքների ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, վարչական հսկողության ակտերի և դրանցում արձանագրված խախտումների վերացմանը վերաբերող ընդհանուր թվով 1720 փաստաթուղթ:

Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարաններում Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) շահագործման և "Mulberry" էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջև փոխգործակցության ապահովման, ինչպես նաև համայնքապետարաններում պաշտոնական կայքերի ներդրման և վարման աշխատանքներին:

2015 թվականի ընթացքում Արմավիրի մարզի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակը եղել է կայուն: Ոլորտային ձեռքբերումներն ու հաջողությունները հնարավոր է եղել ապահովել բոլոր պետական կառույցների, տեղական, միջազգային և հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ սերտ համագործացության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, վարչապետի, նախարարների և այլ գերատեսչությունների ղեկավարների մարզ կատարած այցելությունների և տրված հանձնարարականների կատարման արդյունքում: